

Հ. 1930/936

ՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 22 ԲԱՐՁՐԾԱՎՈՒՆ ՍԵՐԻԱ № 22

Ռ. ԳԱՐՐԻԵԼՅԱՆ



ԿԵՆԳՐԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԲՈՒՅՑ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՃԵՐԵԳ. Ա. 1930

891.99

9-16

Հ.1930/936

182229

ՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

2011 - 05.

№ 22 ԲՆԵԳԻՏԱԿԵՆ ՍԵՐԻԱ № 22

891.995

9-13

Ռ. ԳԱՐԻԿԵԼՅԱՆ

# ԶՂԶԻԿԸ

ԿԵՆԳԱՑՆԵՐՆԵՐԿԱՆ ԶՐՈՒՅՑ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐԵՎԱՆ - 1930

## Զ Դ Զ Ի Կ Ը

Լոռվա Ռւ. գյուղն ամառանոց ելինք գնա.  
ցել:

Համարյա ամեն որ յես ու փոքրիկ ոդնա.  
կաններս զբոսանքի ելինք գնում: Զբոսանքները  
թե մեծ հաճույք ելին պատճառում մեզ և թե  
վորոշ ոգուտ տալիս: Պարագ-սարապ զբոսնող-  
ներ չելինք: Մենք բնասերներ ելինք: Ասեն ան-  
գամ տուն ելինք վերադառնում բույսերի ու կեն-  
դանիների, մանավանդ միջատների պաշարով:  
Բացի այդ, հենց բնության գրկում, նստած դաշ-  
տում՝ խիտ, թարմ կանաչների մեջ, կամ անտա-  
ռում՝ ստվերախիտ ծառերի տակ, դիտում ելինք  
կենդանիներին՝ իրենց բնական պայմաններում:  
Մեկ տեղ մըջուններն ելին ժրաջան աշխատում,  
մի ուրիշ տեղ՝ ծառի վրա ֆայտֆորն եր կրտ-  
ցով ծառի բնին խփում ու մնունդ վորսում, մի  
յերբորդ տեղ ել սարդն եր իր վոստայնի վրա  
անփոք վորսին սպասում:

Մի որ անտառում միքիչ ուշացանք: Մթըն-  
շաղն ընկել եր, շտապում ելինք տուն: Ուշա-  
նալու պատճառը չղջիկներն ելին: Գիշերային  
միջատների յետեից ընկածնետի արագությամբ



59352-66 Հրատ. № 1108

ԹԵՏՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՄԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆԻՒՄ

Գրառելիք. № 2826 (բ.)

Պատվ. 1115

Տիր. 3000

ողի մեջ սլանում ելին նրանք այս ու այն կողմէ:  
Վորքան փորձեցինք մեր ցանցերով նրանց բըռ-  
նել՝ չաջողվեց, թեև շատ ցածր եյին թուշում:  
Թվում եր, թե շատ հեշտ ե բռնել, սակայն դես  
վազեցինք, դեն վազեցինք և վոչ մի կերպ չկա-  
րողացանք բռնել. հոգնեցինք և ուշացանք: Զըղ-  
ջիկ ունենալու ցանկությունը շատ մեծ եր. բայց  
բաց ոդում բռնելու մեր բոլոր ճիգերն ապար-  
դյուն անցան:

Հաջորդ որն եր: Ողնականներս պատշգամ-  
բում ոգնում ելին ինձ թե միջատներին այս կամ  
այն արկղիկում տեղավորելու և թե հավաքած  
բույսերը չորացնելու: Հանդիստ աշխատում ե-  
լինք: Հանկարծ անսովոր բարձր աղաղակներից  
յերեքս ել վեր թուանք. ի՞նչ եր պատահել. աշ-  
խատանքը թողած՝ կանգնել եյինք ապշած: Զեռ-  
քերը թափահարելով, հարահրոցով ու աղաղա-  
կելով, միւլանց յետեկից դեպի մեզ ելին վազում  
քույրերս, ծառան և հարեանները...

Յես ու ոգնականներս սկզբում վախեցանք:  
Ի՞նչ փորձանք եր պատահել: Յերկուդս անտեղի  
չեր, իր պատճառն ուներ: Հիշեցի այն որը, յերբ  
անմեղ, բայց ահարկու տեսքով մի միջատ դուրս  
եր յեկել բանկալից և իր կյանքը փրկելու նպա-  
տակով հանդիստ վազում եր: Տեսնելիք, թե

վորքան հուզվեցին մեր տնեցիները, ի՞նչ ա-  
սես, վոր չթափեցին մեր զլսին. թե խելառ  
ենք և չորս կողմ զզվելի ու թունավոր արա-  
րածներ ենք տարածում և դրանով բոլորի  
կլանքը վտանգում: Վորքան համոզում եյի, թե  
թունավոր արարածներ չկան մեզ մոտ, թե մեր  
կենդանանցի բնակիչները բոլորովին անմեղ  
են իսկի հավատում եյին: Ասում եմ ու ցույց  
տալիս միջատը, մատս մոտեցնում բերանին—  
իսկի լսում ելին: Միքանի որ անցավ, և, իհար-  
կե, փախած միջատը վոչվոքի չսպանեց...


Ահա այդ հիշեցի և այս անգամ և լրջ վա-  
խեցա. հարցրի ոգնականիս.

— Հայկ, հո կարիճները լավ տեղ ես դրել,  
չինի՞ թե նրանք փախել են...

— Զե, —ասաց նա, —ազակե բարձրավիզ  
բանկալումն են, գուրս գալն անհնարինե:

Աղմուկը սաստկացավ. մոտեցան մեզ. գոնե-  
մեկը խոսեր, իսկի բան կարելի՞ յեր հասկանալ.  
մեկը միուսին խանգարում եր, բոլորն ել ճշում  
եյին. յերևակալեցեցք՝ ինչպիսի աղմուկ պիտի լի-  
ներ, քանի վոր, բացի ծառայից, մյուս բոլորը  
աղջիկ ու կանալք եյին...

— Ի՞նչ ե պատահել — հանկարծ գոռացի յես:  
 — Զդիկ, չդիկ, չդիկ...  
 — Չեմ հասկանում, — ասացի, — լավ, չդիկ,  
 հետո... Ուր, մեզ մոտ չդիկ չկա, վոր կծի...  
 ում ե կծել յերևակայական չդիկը...



## Զ Դ Ի Կ

— Արի, արի խոհանոց, — միմյանց յետելից  
 ճշում եյին յեկողները, — արի, խոհանոց ե ըն-  
 կել, այստեղ թռչում ե, փորձեցինք բռնել, չը-  
 կարողացանք, արի, դուռը վրան ծածկել ենք:  
 Նոր հասկացանք՝ բանն իսչ ե: Մեզ հայո-  
 յելու փոխարեն այս անգամ ընդառաջում եյին  
 մեր բնաւիրությանը:

Փոքրիկ ոզնականներս և մյոււները չդիկին  
 միայն անունով զիտեյին. տեսել եյին նրա նը-  
 կարը և անտառում՝ ողի մեջ սրբնթաց թռչելիս,  
 բայց մոտիկից, անմիջապես ձեռքի վրա՝ փոչվու

եր տեսել: Շատ ուրախացանք բախտավոր դիպ-  
 վածով բոլորիս ցանկությունն եր անպատճառ  
 բռնել չդիկը:

Դո բար դեռ յուս եր: Ինարկե, չդիկը  
 պատահմամբ եր դուրս յեկել իր հանգստատեղից.  
 մեկը անշուշտ վսմեցրել ե. չտանելով լույսը՝  
 նա ներս ե մտել պատահած մութ խոհանոցը:  
 Խոհանոցում կատարյալ «բազար» եր. դուրս հա-  
 նեցինք բոլորին, մնացինք մենք ու ծառան: Ծա-  
 ռան յերկար ոկոթ ավելը ձեռքին՝ սկսեց հետա-  
 պնդել չդիկին, իսկ մենք, հենց վոր կենդանին  
 ցած եր գալիս, աշխատում ելինք նրան շորով  
 ծածկել ու բռնել: Զդիկն առաստաղի յեզերքով  
 պտտվում եր, ամենեին մտադրություն չուներ  
 իջնելու. յերբեմն, յերբ հոգն ուժ եր, հանկալ ծ  
 ընկնում եր ցած, հատակի վրա ցատկուում.  
 մենք վրա ելինք հասնում, հենց այն ե՝ պիտի  
 բռնելինք, բայց չդիկը, նորից վեր ոլանալով,  
 շարունակում եր իր պառւյտները: Նրան չեյին  
 խանգարում նույնիսկ լվացքի համար տարբեր ուղ-  
 ղությամբ կապած պարանները. մի անգամ ել  
 կպավ նրանց: Բաչպնս յերեսում ե՝ զգայարանն  
 այնքան է զարգացած, վար զգալով դիմացի պա-  
 րանի կապած լինելը՝ պարանին չհասած՝ շեղ-  
 վում եր:

Հոգնեցինք, չնկատեցինք, թե ինչպես մեկը

մյուսի յետելից ներս մտան մեր տնեցիները՝ նրանց համբերությունն ել հատավ, միացան և իրանց սիրած ձեռվ սկսեցին ոգնել յեզ: Ո, յեթե այդ րոպեցին մի նոր մարդ մտներ, կապշեր ու ականջները փակելով կփախչեր, կատուների կատարալ համերգ եր, ձայները հնչում ելին, աններդաշնակ, ծվում ու ծկլթում եյին, մանավանդ կանացի սեռը... տղաներն ել յետ չելին մնում. աղմկում ելին առանց խնայելու իրենց թռքերը:

Ըստ յերեսութին, անսովոր համերգն ազդեց: Զոջիկը, վոր խուսափում եր զիլ ձայներից, շըշմեց, նրա պտույտները խանգարվեցին, ավելի հաճախ սկսեց հատակն իջնել, նա յել սկսեց զիլ ձայնով ծվծվալ: Մենք ել հոգնեցինք: Մեր անկոչ ոգնականներից միքանիսը ձանձրանալով՝ դուրս յեկան, Միքիչ հանգստանալով՝ նորից սկսեցինք հետապնդել: Ծառան անզգուշությամբ փայտով վիրավորեց չոջիկի թկը, չոջիկը հանկարծ ցած ընկավ ու սկսեց վազվզել հատակի վրայով... Յես բռնեցի նրան, բռնեցի ու հանկարծ «այ» գոչելով ձեռքս յետ քաշեցի... մատըս կծեց իր սրածայր ասեղանման ատամիկներով, Բայց նորից, այս անգամ տվելի զգուշ կերպով, բռնեցի չոջիկին:

Մատիս արյունը տեսնելով՝ ոգնականներս միքիչ յետ քաշվեցին չոջիկից: Զգացին, վոր լավ կծող նը, Պարտիզում մի հարմար տեղ ընտրեցինք, չոջիկին աթոռի վրա պահելով՝ սկսեցինք դիտել: Այժմ մեր առաջն եր կենդանի չոջիկը, բոլորս ել տեսնում եյինք նրան մոտից և համոզվեցինք՝ իզուր չեր, վոր անվանում ելինք նրան գիշերացին մուկ. Վարդգեսը զարմացած հարցրեց.

Այդ ինչ տեսակ մուկ ե, վոր թոչում ե... ինչու ցերեկները չի յերեսում. միթե սա նա յե, վորին մենք հանդիպում եյինք մթնշաղն ընկնելուն պես. քանի՛քանի՛ անգամ թոել են նրանք մեր տան մոտով... Բայց ինչքան անձայն ե նըրանց թռիչքը...

— Այն, — ասացի, — սա թոչող մուկ կամ չոջիկ ե: Գիշերային կենդանի յե նա. իսկի ցերեկը հանդիպել եք նրան թռչելիս:

— Յես մի անգամ տեսել եմ, — ասաց մեզ շրջապատող հարեւան տղաներից մեկը, — բայց նա նոտած եր ցանկապատի վրա. մոտեցա, վոր բըռնեմ և պիտի բռնելի, բայց մատներս հենց վոր դիպան նրան, նա անմիջապես թռավ ու մտավ ախոռը, ել մթնում չկաբողացա նրան տեսնել: Ուր թագնվեց՝ չիմացա:

— Տեսնում եք — ասացի յես, — նրա մուշտակը մոխրագույն, մութ շագանակագույն ե, մի

խոսքով՝ ավելի շուտ խավարի գույնի յե նմանվում. դրա համար ել գիշերները կամ ցերեկները, բաց տեղերում, աննկատելի յե դառնում. նույն գույնի շնորհիվ գիշերները կարող ե աննկատելի ու լավ վորս անել և թե թշնամուց ու գիշերային գիշատիչ թուշուններից ազատվել:

— Դա յել շաքար ու ցորեն ե կրծում, ինչպես մուկը, — հարցրեց Հայկը, — յեթե մկան նման ե, ուրեմն սնունդն ել նման պիտի լինի,

— Զե, — ասացի — նա, թեև նման ե մկան, բայց նրա ազգից չե. սովորական մուկը, առնետը կրծող կենդանիներ են... Ել ինչ կրծողներ գիտեք...

— Ճագարը, նապաստակը...

— Ճիշտ ե, տեսած կլինեք, անշուշտ, նրանցից մեկի ատամները:

— Յես տեսել եմ մկան ու ճագարի ատամները, — ասաց Վարդգեսը, — նրա առջենի ատամները մեծ են՝ յերկուսը վերին, յերկուսը՝ ներքեւի ծնուաներին, մի խոսքով՝ չորս սրածայր կտրիչ ունեն, փորով և կրծում են...

Յես «պինցետով» (բռնիչ) — հատուկ գործիքով բաց արի չղջիկի բերանը. ինչ մեծ բերան եր — բոլորն ել նկատեցին այդ. ծնուաների վրա ամբողջ յերկարությամբ մանրիկ ասեղանը. ման սրածայր և ուժեղ ատամներ ելին շար-

ված. նրանց մեջ միքիչ դուրս ելին ցցված նույնիսկ ժամկերներ (ինչպես կատվի բերանում): Կտրիչները դուրս չելին ցցված:

— Տեսնում եք, — ասացի, — ինչքան սրածայր են ատամները: Զղջիկը գիշատիչ կենդանու բընավորություն ունի: Նա ուտում ե գիշերային միջատներ՝ թիթեաներ, բգեզներ. և վորովնետև միջատները կարծը մասեր ունեն, դրա համար հարկավոր են ասեղանման ատամներ, վորպեսզի կարողանան թե թպրտացող զոհը լավ պահել ու թե լավ զգգել և ուտել: Հիմա մտածենք՝ ինչո՞ւ յե նրա բերանն այդքան մեծ...

Միառժամանակ լսություն տիրեց. բոլորն ել մտածում ելին: Միքանի անհաջող պատասխաններից հետո մեկին, վերջապես, հաջողվեց լուծել հարցը. նա ասաց.

— Յես այսպես եմ կարծում. չղջիկը ման դալ չի սիրում, թաթիկներով զոհը բռնել չի կարող, ուրեմն մնում ե բերանով, այն ել թուշելու միջոցին. մեծ բերանը բաց արած թուշում ե վորովի յետկից, և այս գեպը ում միջատն ավելի շուտ կընկնի նրա բերանը...

Դիտողությունը շատ ճիշտ եր: Յես ավելացրի.

— Այն, նրա սնունդը գիշերային միջատներն են, վորոնք՝ գորշ գույնի շնորհիվ՝ նույն-

պես աննկատելի յեն, Դուք բոլորդ տեսած կը-  
լինեք զիշերավին թռչունի՝ բվի աչքերը:

— Մեծ-մեծ են, — աղաղակեցին այս ու այն

կողմից:

— Այո, մեծ աչքեր ունի, բայց նայեցէք,  
վորքան փոքր են չղջիկի աչքերը, չնայած նա  
յել գիշերային կենդանի յե...

Փոքրիկ ունկնդիրներս սկսեցին իրար նայել,  
կարծես ուզում ելին հարց տալ, թե՝ «այդ լինչ-  
պես յեղավ, վոր չղջիկի աչքերը փոքր են»։

— Տեսնում եք նրա ականջները. մեծ են,  
ուրեմն շատ լավ լսում ե, նույնիսկ միքիչ մեղմ  
ու բարակ են, ուրեմն լավ զգում են ողի չըն-  
չին շարժումն անգամ. նրա շոշափելիքը շատ ու-  
ժեղ ե զարդացած, թկերն զգայուն են: Չղջիկը  
հեռվից արդեն զգում ե, թե միջատը վոր կողմն  
ե թռչում, և անմիջապես վրա հասնելով լայն  
բաց արած մեծ բերանով լափում ե նրանց:

Մենք նայեցինք նրա թկերին. շատ լայն  
ելին բացվում նրանք. թկերը — չղջիկի առջեկի  
ձևափոխված վոտքերն են, մանավանդ յերկար  
ու բարակ են վոսկրավին մատները. մատները  
միացած են մեղմ, բարակ զգայուն թաղանթով.  
այդ թաղանթը հետո անցնում է վոտքերին մին-  
չև նրա թաթի սկիզբը. այսուեղից ել թաղանթն  
անցնում ե ու միանում բարակ պոչին: Յերբ

թկերը բաց ե անում՝ գոյանում ե հովանոցի պես  
մի բան. հեշտութիւնում ել ծալվում են, չեն ճաք-  
ճըքփում:

Խոշորացուցը տալով ոգնականներիցս սե-  
կին՝ խնդրեցի զիտել չղջիկի մազիկը, ապա իմ  
մազը:

— Մազերը նման չեն, — ասաց նա, — չղջի-  
կինը հաշթ չե, տեղաւեղ հաստ ե, կարծես «տեր-  
փողորմա» լինի. այդ լինչիցն ե...

Դիտողությունը ճիշտ եր: Ասացի.

— Չղջիկը տաքարյուն կաթնասուն ե, ինչ-  
պես և մենք, կատուն. նա ձագերին կերակրում  
ե կաթով, այ, տեսեք նրա յերկու փոքրիկ ըս-  
տինքները...

Տաքարյուն կաթնասունը մարմինը տաք պի-  
տի պահի. կենդանիները խիտ մուշտակով են  
պահպանվում. չղջիկն ել, ինչպես տեսնում եք,  
մուշտակ ունի. բայց չղջիկը թռչող կաթնասուն  
ե, իսկ թռչելու ժամանակ ողի մեջ քամի յե ա-  
ռաջ գալիս. յեթե մազիկները հարթ լինելին, կը-  
ցըլելին, լավ չելին պահպանի մարմինը. շնոր-  
հիվ իրենց կազմության՝ մազիկներն իրար հետ  
ավելի սերտ են շփվում ու բամու միջոցին ել  
չեն ցրվում...

Չղջիկին զիտելուց հետո վորոշեցինք նրան  
բաց չթողնել, այ վորոշ ժամանակ պահել տա-

նը, կերակրել ու շարունակել դիտողությունը:

Յերբ այդ մասին լսեց մեր պառավ տանտիկինը՝ խեթ աչքով նայեց մեզ:

— Հը՛, ի՞նչ ե, — հարցրի, — չղջիկը դուրդ չեկամվ...

— Լավ բան չի դա, — ասաց նա, — մարդուս ոգուտ չի բերի. գիշերը վոր գալիս ե, մեկ ել տեսար՝ սպիտակի վրա յե թոշում. իմ հարեանի պատշգամբում մի անգամ այդպիսի մի մուկ ընկավ կախած սպիտակ սփոռցի վրա և ուղիղ խեղճ կնոջ գլխին ու սկսեց քըրըրել նրա մազերը... Զե, լավ բան չի դա...

— Այդ բոլորը վախեցած մարդու յերևակայությունն ե, — բացատրեցի իսու — յերեկի գիշերը սպիտակ բան ես դուրս բերել. զարմանալի յել չե, վոր աչքի ընկնող գույնը հանկարծ գրգռում ե նրան, և նա յել վագում ե դեպի սպիտակը. իսկ մազերը խճճելու պատմությունը — յերևակայություն ե ու պատահականություն... Իսկի միտք ել չուներ ասածդ չղջիկը հարեվանիդ մազերը խճճելու: Չղջիկն անմեղ և ամենապատակար կաթնասուն բարեկամներից ե: Իր ագահության շնորհիվ լափում ե մեր այգիների համար բազմաթիվ վասարակոր միջատներ...

Իհարկե, մենք ուշադրություն չղարձրինք ոյն անարդար և սխալ վերաբերմունքի վրա, վոր

շատերը ցուց ելին տալիս դեպի անմեղ չղջիկը: Պատուհանի վրա տախտակով մի տեղ առանձնացրինք չղջիկին պահելու համար: Այդ որվանից վորոշեցինք նրան կերակրել հերթով: Սնունդը գիշերային միջատներն ելին: Սկզբում նրա բնակարանը պաշտպանված եր, դուրս գալու հընարավորություն չուներ: Կարծես նա փախչելու արամալը թյուն ել չուներ. բռնելիս մի փոքր թեր վիրավորել ելինք, վերը ուաքրել ելինք և հույս ունելինք, թե պիտի բուժվեր: Յերբ միքիչ ընտելացավ, ավելի ազատություն ավինք նրան: Թեհն այնքան բուժվել եր, վոր կարող եր սենյակում թոշել: Այսեն անգամ, յերբ քնելուց հետո զարթնում եր, կամ պատրաստվում եր թռչելու, թեերը կարդի յեր բերում. քթածակերի և աչքերի սահմանում մաշկի տակից ինչ-վոր հոտավետ ճարպանյութ եր դուրս գալիս. այդ ճարպը չղջիկը բուռմ եր թեերին և այդպիսով նրանց փափկացնում և պահպանում չորանալուց:

Պատուհանի վրա ճառի միքանի ճյուղ տեղավորեցինք: Չղջիկն այնուհետեւ սկսեց հանգըստանալ իր սովորական ձեռվ: Բարձրանում եր ճյուղերից մեկի վրա, յետեի վոտքերով բռնվում ու գլուխը ներքն արած կախվում. թեերով ել փաթաթվում եր, մանավանդ ցուրտ յեղանակին:

Մի անգամ, յերբ քնած եր չղջիկը, լինդիե-

ցի Վարդգեսին նրա բերանը միքանի կաթիլ ջուր դցել. քնած չղջիկը կուլ տվեց ջուրը, բայց չզարթնեց. յերբ յերկրորդ անգամ թանաք կաթեցրինք, ծնոտներն ուժեղ շարժվեցին, - թանաքը դուրս թքեց:

— Ո՞...—բացականչեց Վարդգեսը, — ինչպես յերեռմ ե, բա լական զարգացած ճաշակելիք ունի...

Ողին ել գրգռեց չղջիկին: Ճաշակելիքն ուժեղ եր: Պակաս չեր զարգացած նաև հոտոտելիքը. նրա քթածակերը լայն ելին, յերբեմն նույնիսկ ել ավելի եյին լայնանում, կարող ելին կըծկըլ, նեղանալ, գուցե այն դեպքերում, յերբ գրգռում եր նրան անդուրեկան հոտը:

Չղջիկը վարժվեց իր նոր բնակարանին: Մեր տված միջատներն ուտում եր, սենյակում ազատ թոշում ու ընկնում եր հատակի վրա, միքիչ դժվարությամբ եր վեր թոշում, միառժամանակ առջեի թեավոր վոտքերի ոգնությամբ սողում եր. բանեցնում եր թեերի վրա միակ ազատ ժանիքավոր մատը. նույն ձեռվ վարփում եր վորևե տեղ բարձրանալիս. մեծ մատի ժանիքներով բռնվում եր, իսկ յետեկի վոտքերով հերթով մարմինը հրում եր առաջ: Իսկ յերբ ու-

զում եր վեր թոչել, թեերը բաց եր անում, մարմինը միքիչ՝ բարձրացնում յետեկի վոտքերի վրա և միքանի անդամ ցատկում դեպի վեր, թեերով թափահարում: Միքանի ձիգերից հետո հաջողվում եր թոչել, բայց այս ձեռվ թոչելը, ինչպես յերեռմ ե, բավականաչափ դժվար եր: Ավելի հաճախ նա բարձր տեղերից եր թոչում. նախ կախվում եր յետեկի վոտքերով ամրացած վորևե բանի, որինակ՝ վարագույրի, ապա ցած եր գլորվում և այդ միջոցին հանկարծ թեերն ուղղում, տարածում ու թափահարելով թոչում եր... Ճիշտ նույն բանը նկատեցինք, յերբ մի որ, մեր անգուշտության պատճառով, բաց սենյակից չղջիկը գուրս թուավ և նորից նստեց մի մեծ ծառի ճյուղի վրա: Յերեկ եր: Հայկն սկսեց ծառը բարձրանալ: Չղջիկը գլուխը ներքև արած՝ կախվել եր ծառի ճյուղից: Այն ե՝ Հայկը պիտի բռներ նրան, բայց չղջիկը իր լավ հոտառության ու լըսողության շնորհիվ զգաց նրա ներկայությունը, անմիջապես ճյուղից ներքև սլացավ ու գետնին չհասած, թեերն ուժեղ թափահարելով վեր թըռավ...

Մենք վազեցինք նրա յետեկից. զիտելինք, վոր հեռու չեր գնա. լուսից նա խուսափում եր: Կմտներ վորևե մութ տեղ և կպահվեր: Այս անգամ նա սրընթաց խրվեց ցանկալատի մեջ, նրա

59352-66



ՀՀ ԳԱՅԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

մութ արանքներում ու խճճվեց իրար հյուսված տերևաշատ ճյուղերի մեջ։ Փորձում եյինք ըըռնել։ Ի՞նչպես եր ծվծվում, ի՞նչպես եր փորձում իր ասեղանման ատամներով պաշտպանվել, չեր ուզում նորից գերության մեջ ընկնել... Մենք սկսեցինք աղմկել, վոր գոնե դուրս գուր ցանկապատի միջից։ Մեր աղաղակներից նա դողում եր, մեր ձայները նրան զրոյում ելին, այդ միջոցին նա լսափողը ծածկում եր ականջի մեջ յեղած հատուկ, ավելի փոքր զույգ ականջիներով (թաղանթանման)։ Մեծ ականջակոնքի մեջ յեղած փոքրիկ ականջիկները հենց զրա համար ելին. բարձր, զիլ ձայներից ականջները փակել վ խուսափում եր աղմուկից։

Ոգնականներս խղճացին, տեսնելով, թե ինչ զիսի զայրութով եր չղջիկը պաշտպանվում, մեծ բերանը լայն բաց անելով՝ սպառնում եր ասեղիկներով և անդադար ծվծվում, հենց վոր դի չում եյինք նրան. գլուխն անմիջապես ուղղում եր ձեռքիս կողմը և ամեն ըոպե պատրաստ եր կծելու. Մենք վորոշեցինք գոնե ցանկապատից դուրս բերել, վոր չղջիկը կատվի ձանկը չընկներ։ Մի կերպ փայտով դուրս հանեցինք. հսզիվ աղատվեց կապանքներից, անմիջապես վեր թռավ, այս անգամ անվերադարձ։

Տուն վերադարձանք։ Քիչ զիտեցինք, մեր դիտողություններն ընդհատվեցին։

— Տեսնես ուր գնաց, — ասաց Վարդգեսը, — կունինա, արդյոք, այնպիսի հանգիստ, ապահով տեղ, ինչպես մեզ մոտ ուներ։

— Ինչու չե, — ասացի, — ավելի քան ապահով. կմտնի կամ ծառի բնի մեջ, կամ վորեե ավերակ դատարկ տուն, ծայրահեղ դեպքում ժայռերի ճեղքերն ել նրան ապահով կպահեն. վերջապես ամենապահով տեղը — քարալըներն են։ Համենայն դեպսնա ազատ ե. իսկ ազատության մեջ կենդանին ավելի լավ գիտե, թե ի՞նչպես պիտի պաշտպանվի թշնամուց։ Լավ ե, վոր ազտվեց. մեր չղջիկն եղ եր, ուրեմն կարող ե ձագեր ծնել, իսկ զրա համար նա պետք ե, իհարկե, ապահով և ազատ լինի. Նրանք գարնանն են ձագեր բերում։ Այժմ հենց ժամանակն ե։

— Բայց նա, յեթե չեմ սխալվում, միշտ կախված ե հանգստանում. ձագերը ծնվելիս հոցած չեն գլորվի, — հարցը հայկը։

— Նա այդ դեպքում ալսպես ե անում. կախվում ե գլուխն ի վեր. թեերի ճիրանավոր մեծ մատներով կախվում ե վորեե բանից, պոչը թաղանթաթևով դեպի վեր ծալում, ապա քսակի կամ թասի նման մի բան ե ստացվում, ծնված ձագերն ընկնում են թասաձև ծալքի մեջ և պահպում. մայրը յերկու ստինք ունի, վորից և ձագերը կաթ են ծծում։

— Իսկ հետո, վորտեղ ե նրանց պահում:  
— Հենց իր վրա. յերբ մի տեղից թռչում ե  
մի ուրիշ տեղ, ձագելն ել իր վրա կախված են  
տեղափոխվում:

— Յեթե են հասունանում:

— Հինգ-վեց շաբաթվա սեջ նրանք արդեն  
բոլորովին հասունանում են:

Մի բանի մասին ել մռածեցին ոգնական-  
ներս: Յեթե նա միջատներով ե կերակրվում,  
ապա ի՞նչ պիտի անի ձմեռը: Արդյոք թռչուն-  
ների նւան սա յել չի չփում տաք յերկրներ,  
վորտեղ թե յեղանակներն են նպաստավոր, և թե  
սեռնդն ե առատ:

Այդ հարցն ել պարզեցի:

— Նա չի թռչում տաք յերկրներ, նրա թե-  
վերն այնքան ուժեղ և հարյար չեն յերկարա-  
տե ճամպորդության համար. չղջիկն ոդի սեջ յեր-  
կար պահվել չի կարող, արծվի, գիշատիչ թռչու-  
նի նման ել չի կարող սավառնել. բոլորդ ել տե-  
սաք, թե ինչպես նա սրընթաց ընկնում ե այս  
ու այն կողմ: Ուրեմն հեռավոր յերկրներ թռչել  
նա անկարող ե. մնում ե իր հալրենիքում: Զմեռը  
պահվում ե ծառերի բնի մեջ, կամ հենց մեր  
տան տանիքներում, մութ մառաններում... և  
ընկնում ե ձմեռային քնի մեջ:

— Իսկ յեթե քնած ժամանակ նրան վորեւ  
գիշատիչ լափի:

— Այս, պատահում ե, վոր զո՞ն են զնում,  
բայց մեծ մասսամբ փրկվում են. մթության մեջ  
մուշտակի գույնի շնորհիվ նրանք դառնում են  
անշատակելի: Ի՞նչ անի չղջիկը, սնունդ չկա, յե-  
թե չքներ, սովի պիտի մատնվեր: Բնությունն  
ել նրա մեջ զարգացրել ե քսելու հատկությունը:  
Քնած չղջիկը սնունդ չի լնդունում. իր մարմնի  
մեջ յեղած պաշորը (ամառվանից կուտակված  
ճարպը) բավական ե նրա կյանքը պահպանելու  
համար, Քնած չղջիկի մարմնի կենսական գոր-  
ծողությունները շատ դանդաղում են, արդունը  
նույնպես դանդաղ ե հոսում, սիրտը թույլ իւր-  
փութ, մարմնի ջերմությունը 24,75 աստիճանից  
իջնում ե մինչև 4 աստ.: Դուք ել գիտեք, վոր  
ինչքան ուժեղ շարժման մեջ լինենք մենք, այն-  
քան ավելի սնունդի կարիք ենք զգում:

— Ուրեմն, ճիշտ արջի նման ե չղջիկը,  
քնում ե, մինչև վոր նորից գարունը գա:

— Այս, բայց պատահում ե յերեմն՝ ձը-  
մեռվա մեջ հանկարծ, թեև կարճատե որերն ըս-  
կըսում են տաքանալ, չղջիկն ել զարթնում ե,  
բայց յերբ նորից ցրտերն սկսում են, նա նորից  
քուն ե մտնում...

Մեր հարեանները յերբ իմացան, վոր չղջիկը  
փախել ե, կարծես ուրախացան:

— Չինի՞ թե մեկն ել եք բռնելու, — հար-  
ցըրեց սի կին:

— Այս, կբռնենք և ելի բաց կթողնենք, —  
բարկացած ասաց ոգնականներիցս մեկը. հիմար-  
ն էր եք, չեք հասկանում, թե վորքան ոգտակար  
կենանի յե նա:

Յես նրանց մի դեպք պատմեցի:

— Գերմանիայում՝ մի զյուղի շրջակայքում  
անտառ կար. գյուղում պաղատու այգիներ եյին.  
զյուղացիները լավ բերք ելին ստանում: Մի որ  
վորոշեցին անտառը կտրել. գեղեցիկ անտառ եր,  
նա շատ եր թարմացնում զյուղի ողը, բամիները  
մեղմացնում: Շատ չմատածեցին. ակսեցին կըտ-  
րել ան ոտառը. կացինների հարվածներից գլորվում  
ելին դարավոր ծառերը: Զմեռ եր: Կտրված ծա-  
ռերի բներում բազ խթիվ չղջիկներ եյին պատրս-  
պարվել. քնած ելին նրանք. գյուղացիներն ան-  
խնա ջարդութեցին բոլորին, անտառն ել կտրե-  
ցին... Յեկավ գարունը... Գյուղացիները վայնա-  
սուն բարձրացրին. այդիները յենթարկվել եյին  
միջատների անսովոր հարձակման... վնասվեցին  
պտուղները... անբերը, վատ տարի յեր... Կար-  
ծում ելին, թե աստծու պատիժ եր, բայց հաս-  
կացաք, թե բանն ինչումն եր...

— Բացատրիր նրանց, Վարդգես:

— Զեր դատարկ գլուխները յեթե չունենա-  
լին այն գյուղացիները, նրանք անտառները չելին  
կտրի, ինչպես յերբեմն դուք ել եք անում. բա-

վական չե, վոր չղջիկներին ձմեռվա բնակարանից  
զրկեցին, նույնիսկ համարձակվեցին սպանուել  
նրանց... Յեկ լավ կերան գարնանը: Չղջիկներ  
չկացին, վոր միջատներին վոչնչացնելին, սրանը  
ել համարձակվեցին այգիների վրա:

Վարդգեսն այդ այնպիսի յեղանակով ասաց,  
վոր կարծես նկարագրածս դեպքը հենց մեր ա-  
սառանոցում կատարված լիներ, և մեղավոր  
չղջիկասպաններն ել մեր հարեանները լինելին:  
Նրա դեմքի արտահայտությունը կարծես ասում  
եր. «Տեսամք, ճաշն յեփել եք, դե դուք ել կե-  
րեք»:

Հարեանները բան չասացին:

Համոզեցինք նրանց թե վոչ, չգիտեմ, բայց  
միքանի որ անցած՝ յես ու ոգնականներս ա-  
կանատես յեղանք մի դեպքի: Հարեան բակի այ-  
գին եր թուել մի չղջիկ ու նստել ծառին. Հարա-  
ճընի յերեխաններն ավելը, փայտը վերցրած՝ խը-  
փում ելին ծառին՝ չղջիկին սպանելու կամ ցած  
գլորելու նպատակով: Այն եւ ուզում ելինք գնալ  
ոգնության, բայց հանկարծ, մեծ ճիպոտը ձեռ-  
քին, այգի վազեց տղաների մայրը: Դա նա յեր,  
վոր մի ժամանակ մեղ հետ վիճաբանում եր:

Աղաղակելով, հայնոյելով վազեց կինը և չա-  
րաճի տղաներից մեկի ականջից քաշելով, մյուսի  
վզակոթին տալով՝ դուրս հանեց այգուց:

— ԱՌ տնաքանդներ, բղավում եր նա - եդ  
մուկն ի՞նչ մեղ ունի, վոր սպանում եք նրան,  
հը... բաս մոռացմք հարևան վարժապետի խոս-  
քերը... Դուս յեկեք ես ըոպեյիս, թե չե՞ հոգի-  
ներդ կհանեմ...

Յես ու ոգնականներս իրար նայեցինք, բո-  
լորս ել մեծ բավականություն զգացինք...

— Իզուր չանցավ ուրեմն մեր չղջիկի պատ-  
մությունը, — ասաց Հայկը:



ՀՀ Ազգային գրադարան



NL0396022

7731

W



ԳԻՒԾ 8 ՎՈՂ.  
( $\frac{3}{4}$  մ.)

P. Габриелян

# ЛЕТУЧАЯ МЫШЬ

(Беседа по зоологии)

Госиздат ССР Армении  
Эревань—1930